

Փարիզէն ի Հաւր հեռաւորութեան: Երկրին լայնութիւնը շատ քիչ էր, և եթէ Պիրէա մէջը չսեպենք, Յորդանանէ ցծովն գրեթէ քսան փարսախ է: Բայց Ս. Հերոնիմոս լայնութեան համար թիւ մը չտար մեզ: Երկրին հարաւէն ի հիւսիս երկայնութիւնը տալէն ետքը՝ կը զգուշանայ լայնութիւնը ըսելու այս բառերով. «Կ'ամաշնմ խոստացեալ երկրին լայնութիւնը ըսելու, մի գուցէ հեթանոսաց հայհոյելու պատճառ տուած ըլլամ»: Համառօտիւ Պաղեստին Զուխցերիի չափ մակերևոյթ մ'ունէր:

Յիսուսի Քրիստոսի հրապարակական կենաց տտեն քաղաքական երեք մեծ բաժանմունքներ կը նկատեմք. 1^o Հրէաստան և Սամարիա քանի մը սահմանաժայր քաղաքներով հոռովմէական կուսակալէ մը կը կառավարուէր. 2^o Գալիլիա և Պիրէա՝ Հերովդէս Սեթիպասի չորրորդպետութեան մասն էին. 3^o Պաղանէա, Տրակոնիտ, Կալւոնի, Իդուրիա, Աբանիթեր, Հերովդէսի եղբօրէն՝ Փիլիպպոս չորրորդպետէն կախումն ունէին: Այս վերջին փոքրիկ և բոլորովին աննշան տէրութեանց նկատմամբ ըսելու բան չունիմ: Տիբերիս լճին հիւսիս-արեւելեան կողմն էին, տեղ մը՝ ուր Յիսուս երբեք ոտք չկոխեց:— Ի հակառակէն միւս գաւառաց վրայ մանրամասն պիտի խօսիմք, որոնք շատ անգամ կը յիշուին նոր կտակարանին մէջ: Անոնց աշխարհագրական դիրքն շատ դիւրաւ հասկանալի է: Հրէաստանի, Սամարիոյ և Գալիլիայի երեք գաւառներն մին միւսէն վեր էր, Յորդանան գետին և ծովուն մէջ տեղ՝ Հրէաստան ի հարաւ, Սամարիա միջակէտ, Գալիլիա ի հիւսիս: Իսկ Պիրէա Յորդանանէն անդին և զած ամբողջ երկրին կը պարունակէր իւր մէջն, Փիլիպպոսի չորրորդպետութեան հարաւակողմն:

Շարունակելի

Հ. ՆԵՐՍԷՍ Կ. ՃՆՏՈՅԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԵՐԱՁՆ ՄԱՀՈՒ

«Ե՛կ շումչ՝ ի չորից Ռոզմոց և փչեմ ի մեռեալս յայտսիկ և կեցցեմ.
Եւ եմոտս ի Յոսա շումչ և կամզմեցամ կացիմ ի վերայ ոտից իւրեանց:»

ԵԶԵԿԻԷԼ.

Ա

Ծովանայր անհուն դաշտն ըստուներնեբով,
Ճիւղադաճև կոյտ գետնաբարշ միգի
Լեռներն ընկըղմած՝ մարած էր զաստեղս.
Հրազդոյն նըշողէր լոկ եղլիւր մահկի:
Չառնովս յեց 'ի ժայռ' և աջն 'ի մօրուս'
Հերարձակ՝ կանգուն կայ վեհ մարգարէն՝,
Խորհուրդք մեծամեծք կընճոեն զիւր ճակատ.
Քան ըղմութն և անգր աչք իւր թափանցեն.
Կեանք առած կանգնի իւր դէմ ապագայն.
Բստ զօրեւ աչաց նըշմարէն ամբոխս
Խրճենալս ուրուատիպ՝ որ ցընդին:— ի ստոր՝

Բիւր աղքատ տեսնէ զոսկերս ոտնակոխս :
 Խօշին իմն անխուլ և խորհրդաւոր
 Իբրև գիշերոյ հողմն ընդ Ովկէան՝
 Կ'անցնի այդ դաշտէն : Կարծես մեռելոց
 Պատմեն իրարու զգաղտնիս գանկքն ունայն :
 Բոլոր մարդկութեան ցաւերն և բոլոր
 Յոյսք իւր դերեւեալ, արտասուք բոլոր
 Ի մի վայր 'ի մի կ'ամփոփեն հողի
 Սուրբ Տեսանողին 'ի լանջ հրատուոր :
 Եւ քրտմնասարսուռ և լքցուած երկնիւք՝
 Ահաւոր Օրուան փողոյն հանգունակ՝
 Տարածեալ ըզձեռս՝ աղաղակէ նա :
 « Արիք՝ կանգնեցէ՛ք՝ ոսկերք ցամաքեալք » :

Բ

Կը կայտուն ոսկերք, սարսուռ դաշտն համայն,
 Ինչպէս ծով անեզր 'ի նախ շունչ մրրկի,
 Ինչպէս անտառներն յաշնան հողմակոծք,
 Ինչպէս տիեզերք 'ի շունչ Արարչի :
 Եւ երբ յայն անդունդ խաւարի՝ ցոլայ
 Փայլակի մը շող՝ ամբոխք 'ի տես գան
 Խուռն այնչափ՝ որ միտք իսկ կ'ապշին թէ մահ
 Քանի՛ դարուց մէջ կրտրեց հունձս այդքան :
 Ոսկր ոսկեր դիմէ, գանկք 'ի յողնայար,
 Ամէն նիւթք ցըրուեալք կենաց 'ի շրջան՝
 Փութան յերիւրեւ զմարմինս այն ձեով,
 Յոր էր մէն մի ազգ՝ սեռ՝ տիք ըստ ինքեան :
 Թօթափին ծառէն սաղարթք, 'ի վտակէն
 Ալեակք կը ցընդին, 'ի թըռչնոյն՝ նըւազք :
 Կ'անջատին երփունք ծաղկին բաժակէն,
 Հըրդեհէն՝ կայծեր, օդէն՝ թոյլ հոսանք :
 Վիհք ծովու ցեւուն՝ և հրէլից ներքնոց
 Քայքային մարմինք : մարի արծաթ լոյս
 Ծովուն լուսնեկաց. — փեռեկին ցամաքք,
 Եւ յափըշտակեալ նիւթք 'ի բաց տան խոյս
 Կը դիմեն հապճեալ 'ի ստացիչս իւրեանց,
 Այլք յարեան կայլակս ինկած գիւցաղնի,
 Այլք ըզգիրդ մանկան այտըս ներկելու,
 Այլք յաստեղաւաց ըզեղ քերդողի :
 Եւ ահա իրանք կազմին կուսազեղք
 Իբրև ըզրիւրեղ պաղպաղունք, — միայն

Ժըպիտ մի պակսի յայտից . . . պատանեակը
 Անբրադ աչքը՝ կանգունը՝ և անկենդան .
 Եւ մայր գրկելիոր զորդով դիեցիկ
 Զամբելով կաթնեակն առանց գորովոյ .
 Եւ նոր ամուսինը գիրկ ընդ խառն՝ յիրար
 Պըշնուն ապշեալք իմն և առանց սիրոյ .
 Զեն այս գարնայնոյ կենսառատ զարթօնք,
 Այլ իբրեւ ծրմռան պաղ արևուն տակ
 Զեանց միջէն կանգնած՝ զոստորն ծամածուռ
 Յըցելով ընդ օդս՝ հինաւորց անտառք :

Գ

Շող մ'այլ աստուածունս կայլակեց յիւր դէմս ,
 Եւ գոչէ . « Եկ' շունչ' 'ի չորից հողմից : »
 Բիւրք բիւրուց անդէն բոցք ծիրանածայրք
 Տեղան իբրեւ ձեան տարափներ յամպոց :
 Եւ սողակելով մէն միոյ նդ շըրթունս
 Բնակիչք միջոցին ոգիքն աստղաճնմ՝
 Խապառ մոռացեալ զիւրեանց հին ընկերս
 Մըտենն հարկագրեալք 'ի բանտսն զըժխեմ :
 Իբրեւ ոք խոցեալ սըրտակեզ վըշտիս՝
 Քընոյ մոռացմամբ ըսփոփուած՝ յայգուն
 Երբ զարթնու և զգայ անձին՝ 'ի միտս իւր
 Խուժէ իւր ցաւոց ամբողջ դառնութիւն .
 Այսպէս 'ի քընոյ մահու յարուցեալ
 Մարդն հայեցաւ շուրջ . . . մի առ մի զարթեան
 Յուշք իւր և կըսկիծք . . . բախեց ձեռն 'ի ձեռն ,
 Եւ հառաչ մ'եղաւ առաջին իւր ձայն :
 Քանզի երկնազօր իւր աչաց առջև
 Այժմ խըզուած են դիմակք :— Տեսնէ նա
 Մինչ երկկամանց 'ի խորս ինչպէս ենն ,
 Փոսք զազրաթորմիք յորոց կը պրժգայ :
 Ժըպիտներու տակ որջացեալ կըծկին
 Տըռփանք՝ շահ՝ նախանձ՝ մախանք՝ ինչպէս օձք
 Ընդ մանիշակաց թըփովք գալարեալ ,
 Համբոյրքն են կիզիչ քան ըզհուր դժօխոց :
 Գետնասող մրտած ըստերջ նըկըրտմուրք ,
 Անհաս մեծութեանց օգեհաչ պատրանք ,
 Յայդողուածք պանդոյր կամ սոնք տըզիտի
 Եւ ննդաւորին սադրանք և դարանք :

Եւ բիւր մատնութիւնք՝ զոր ճարտար լեզու
Գիտէր ըսքօղել հրապուրիչ անուամբք,
Ձաղիրք՝ մերկանդամք կ'երևէին հոն
Ձերդ որդունք բացուած կափարչի մը ստակ.
Եւ քըստմնասարսուռ և կորաքամակ
Մարդկութիւն համայն հեծեծէր տըխուր.
« Ո՛վ սուրբ Մարգարէ, ո՛վ սուրբ Մարգարէ
Տուր մեր գերեզման. մեր քունը մեզ տուր,
« Որդունք մեր մարմինն առին բաշխեցին
Մէն մի մասն յիւր տարր ուր էր երջանիկ.
Սիմունն յանապատ ցըրուեց զայն ոսկերքս,
Զոր չըփըշըրեցին բորենեաց ժանիք,
« Կենաց յարածուկ Ովկիանուն մէջ
Եղբրէ եղբր կածկոծող նըշխարը
Յուսացեր էինք թէ հանգիստն է մահ.
Եւ նա փոխումն էր 'ի նոր վիճակ,
« Գերեզմանին մութ սեմէն անդր հազիւ
Բանայր հոլաթեւ հոգին յանհուն լոյս,
Հազիւ սրովբէին դաշնակութեանց ձայնք
Երկնածարաւեալ հասնէին ոգւոյս.
« Յառաւօտել անդ երկնաւոր կենաց՝
Գիշերն այս երկրիս կոխեց վերըստին.
Մի առ մի աչքէ մարեյան աստեղք,
Տակէ տակ վըհերն երկրիս բացուէին.
« Ձարհուրելի ձայնդ ըզմեզ ետ կոչեց,
Եւ լուսոյ սանդղէն 'ի ստոր իջանք մեք
Ի ստուերս անդ չիրմին, որոյ դուռն էր բաց
Այս դաշտիս վըրայ ուր կամք ցըրտաբեկք:—
« Ով սուրբ մարգարէ՝ ո՛վ սուրբ մարգարէ՝
Թող ոսկերքս 'ի քունն եթէ կեանքն այս է ».

ԹՈՎԱԾԱՅ ԹԵՐԵՅԵԱՆ

